

ՀՐԱՀԱՆԳ

ՎՈՋԽԱՐՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

636.3
Հ-99

ԹԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

1940

ur

24 SEP 2010

636.3
2-99

ՀՐԱՀԱՆԳ

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն



ՀԱՅԳԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1940

1. ԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Վոչխարների արհեստական սերմնավորումը կիրառվում է, վորպես զոոտեխնիկական միջոցառում՝ հոտի վորակական յավաղումն արագացնելու, բարձրարժեք ցեղական արտադրող-ներին ափելի լրիվ ոգտադործելու և, վորպես անասնարուծական միջոցառում, վարակիչ հիվանդությունների տարածման դեմ պայքարելու համար:

2. Վոչխարների արհեստական սերմնավորման կայանները ձևադակերպվում են հաստատված պլանի համապատասխան վարակիչ հիվանդություններից ապահով տնտեսություններում (ֆերմաներում), կոլտնտեսությունների և կոլտնտեսականների հոտերը սպասարկելու համար:

3. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում անապահով տընտեսություններում վոչխարների արհեստական սերմնավորման կայանների կազմակերպման համար անպայման պահանջվում է Հանրապետական Հողօգտագործության անասնարուծական վարչության թույլտվությունը:

4. Յեթե պլանով նախատեսված է սպերմայի փոխադրումն, այդ դեպքում հիմնական կայանին կարող են կցվել ոժանդակ կայաններ:

Հիմնական և ոժանդակ կայանների միջև յեղած տարածությունը վորոշվում է փոխադրական միջոցներին համապատասխան, այն հաշվով, վորպեսզի սպերմայի ստանալու և նրան ոժանդակ կայանում ոգտադործելու ժամանակամիջոցը 12 ժամից ավելի չտեի: Սպերմայի փոխադրման և սերմնավորման անհրաժեշտ դործիքներն ու նյութերը (տերմոսներ, հայեքներ, փորձանոթներ և այլն) ամրացվում են ոժանդակ կայանին:

5. Սպերմայի փոխադրումն ապահով տնտեսությունից, վարակիչ հիվանդությունների տեսակետից անապահով տնտեսու-

985
4/1

ИНСТРУКЦИЯ
ПО ПРОВЕДЕНИЮ
ИСКУССТВЕННОГО ОСЕМЕНЕНИЯ
О В Е Ц
Армгиз, Ереван, 1940 г.

թյուն, թուլատրվում է յուրաքանչյուր առանձին դեպքում շրջանային անասնաբուժի կողմից, վորը պարտավոր է ցույց տալ տեխնիկ սերմնավորողին անհրաժեշտ միջոցառումներ ապահովելու վարակի տարածման կանխումը, կահավորման առաքելներին վարակահանման տեխնիկան, վորոնք հետ են ստացվում արհեստական սերմնավորման կայանն անառակով տնտեսությունից:

6. Զուգավորման ժամանակաշրջանում հիմնական կամ օժանդակ կայանին կարող են ամրացվել և բերվել (մինչև 5 կիլոմետր շառավիղում) վոչխարների ավելի փոքր հոտեր, յեթե դու հնարավոր է անասնաբուժական նկատառումներով և վորոնց համար անառակահանքում և կաղմկերպել ինքնուրույն կայաններ: Այդ կոլտնտեսությունների վոչխարները սերմնավորելու համար կայաններին ամրացնելիս պետք է համաձայնեցվի կայանի տիրոջ (կոլտնտեսության) և շրջանային անասնաբուժի հետ:

2. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Սերմնավորման աշխատանքներն սկսելուց վոչ պակաս քան յերկու ամիս առաջ հողբաժինը կաղմակերպում ու վարում է սերմնավորող տեխնիկներին ու նրանց ոգնականներին պատրաստման դործը:

2. Արհեստական սերմնավորման տեխնիկների կուրսերը կոմպլեկտավորվում են՝

ա) կոլտնտեսությունների անասնապահ տեխնիկներից:

բ) կոլտնտեսականներից ու կոլտնտեսուհիներից, առաջին հերթին՝ անասնապահական բրիգադների կողմից և նախկինում արհեստական սերմնավորման կայաններում աշխատողներից:

3. Կուրսերում սովորելու թեկնածուների ընտրությանն անպայման պետք է մասնակցի արհեստական սերմնավորման հրահանգչը կամ յենթաշրջանային ղոտտեխնիկը:

4. Արհեստական սերմնավորման հրահանգչների և տեխնիկների պատրաստումը կատարվում է ԽՍՀՄ-ի Հողթողկոմատի կողմից հաստատված ծրագրով: Կադրերի պատրաստման տևողությունը պետք է լինի մեկ ամսից վոչ պակաս:

5. Կուրսերն անցկացնելիս անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր կուրսանու դործնականորեն մի քանի անգամ կատարի

սերմնավորման հետ կապված բոլոր դործողությունները, դործնականորեն տիրապետի վոչխարների ու կովերի արհեստական սերմնավորման տեխնիկային և ձեռք բերի անհրաժեշտ տեսական գիտելիքներ:

6. Սերմնավորող տեխնիկներին գիտելիքների ստուգումը անց է կացվում հանձնաժողովով, մասնակցությամբ Հանրապետական Հողթողկոմատի արհեստական սերմնավորման մասնագետին: Հողային որդանները յուրաքանչյուր հաջող քննություն տվողին պետք է տան վկայական կուրսերն ավարտելու մասին, ցույց տալով առաջադիմության թվանշանները:

3. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿԱՀԱՎՈՐՄԱՄԲ ՅԵՎ ԳՈՒՅՔՈՎ

1. Արհեստական սերմնավորման կայանները կաղմակերպվում են հատուկ կառուցված կամ հարմարեցված շենքերում՝ հատուկ շենքեր կայանների համար կառուցվում են տիպարային նախագծերով՝ հաստատված ԽՍՀՄ Հողթողկոմատի կողմից: Ղեկավարվելով այդ նախագծերով կայանի համար կարելի է հարմարեցնել տնտեսությունում յեղած պատրաստի շենքը: Կայանի շենքը տաքացնելու համար անհրաժեշտ է ունենալ ալյուրյա մշտական վառարան:

2. Արհեստական սերմնավորման կայանը պետք է բաղկացած լինի լաբորատորիայից, սերմնավորման սենյակից (մասնիկ), չսերմնավորված վոչխարների համար բաժանմունքից (տամբուր), սերմնավորված վոչխարների համար բաժանմունքից (տամբուր) և մեկ բաժանմունք խոյերի համար:

3. Լաբորատորիան, մանիփլ, սերմնավորման կամեյրան պետք է լինեն տաք, չոր, լուսավոր և բավարարեն սանիտարական պահանջներին: Աշխատանքի ժամանակ ջերմությունը վերահիշյալ շենքերում պետք է լինի մոտ 20 աստիճան, 17-25 աստիճան տատանումներով ըստ ցեխիռան: Չի թույլատրվում կայանի շենքում ջերմության խիստ իջեցում, վորի համար բոլոր մուտքերի առաջ պետք է պատրաստել տաքացրած տամբուրի իստ փակվող դռներով:

4. Չի կարելի աշխատել չոգ յեղանակին, արեվից ուժեղ տաքացած շենքերում, քանի վոր 25 աստիճանից բարձր ցեխի-

առաջին ջերմութիւնն դեպքում սերմնարջիջներն արագ մեռնում են: Բարձր ջերմաստիճանի վնասակար աղդեցութիւնից խուսափելու համար հարաւային շրջաններում կայանի շենքը պետք է կառուցել վոչ ջերմահաղորդ նյութերից (դարմանի շաղախից), տանիքը պատրաստել չարդախով, իսկ պատերը դրսից և ներսից սպիտակեցնել:

5. Սերմնավորման սենյակի լուսամուտի դիմաց պատրաստվում է դազդահ, սերմնավորման սենյակի լուսամուտը պատրաստվում է հատակից կես մետր բարձրութեան վրա, լայնութեամբ վոչ պակաս 0,8 մետրից: Կայաններին կից պետք է պատրաստվեն 2-3 հատ աղալներ մինչեւ 100 դուլա տարողութեամբ:

6. Անասնաբուժարանների շենքերում չի թույլատրվում պատրաստել (հարմարեցնել) կայաններ, կայանի շենքերում արդելվում է պահել այլ դեղորայք, բացի արհեստական սերմնավորման համար գործածվող նյութերից:

7. Սերմնավորումն սկսելուց առաջ շենքը խնամքով ավտահանում են սպիտակեցնելով թարմ հանքային կրով և լավ ողափոխում: Կայաններին կցված հոտերում վարակիչ հիվանդութիւններ հայտնաբերելիս տեխնիկ սերմնավորողը պարտավոր է դադարեցնել աշխատանքն, անմիջապէս հաղորդել այդ մասին շրջանային անասնաբուժական պերսոնալին և նրանցից ստանալ ցուցմանքներ անհրաժեշտ միջոցառումների մասին:

8. Յուրաքանչյուր կայան պետք է ունենա բացի արհեստական սերմնավորումն անցկացնելու հատուկ գործիքներից նայել տնտեսական կահավորում համաձայն կցված ցուցակի:

Ամբողջ դուլքը — դազդահները, մուռները և այլն պետք է պատրաստված լինեն նախորոք, այն հաշիվով, վորպէսզի լրիվ ապահովվի պահանջված քանակը և պահվի մաքուր դրութեամբ:

4. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒՅՑՈՒՆԸ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Արտադրող խոյերն ընտրվում են ըստ ցեղական և վորակական կազմի, տոհմային աշխատանքի պլանի համապատասխան:

2. Յեղած խոյերից արհեստական սերմնավորման կայաններին պետք է ամրացնել պլանային լավացնող ցեղերի լավագույն արտադրողներին:

3. Արտադրող խոյերին արհեստական սերմնավորման կայաններին նշանակումը կատարում են հողբաժինները և պետտոհմաբուժարանները: Տոհմային արտադրողներին ընտրելու համար կազմվում է հանձնաժողով հետեւյալ կազմով. Պետտոհմաբուժարանի սեյկիցիոները կամ շրջհողբաժնի ղեկավարը տոհմային դժով (այն շրջաններում, վորոնք չեն դառնում պետտոհմաբուժարանի գործունէյութեան շրջանում) անասնաբուժը, արհեստական սերմնավորման հրահանգիչը, Ֆերմայի վարիչը և տեխնիկ սերմնավորողը: Արհեստական սերմնավորման համար արտադրողներ ընտրելու գործի հսկողութեանը դրվում է ՊՏԳ (Պետական տոհմային դիւք) տեսչի և Հողտնտեսական արհեստական սերմնավորման ավագ մասնագետի վրա: Տոհմային խորտնտեսութեաններում և կոլտնտեսական տոհմային Ֆերմաներում, նույնպէս և մյուս դտարյուն և բարձրարյուն մետիս անասուններ ունեցող Ֆերմաներում, արհեստական սերմնավորման կայաններին պետք է ամրացվեն միայն լավագույն դտարյուն արտադրողներին, վորոնք դրանցված են պետական տոհմային դրքում և առաջին հերթին սերնդի տեսակետից ստուգվածները: Տոհմային խորտնտեսութեաններում և տոհմային Ֆերմաներում արհեստական սերմնավորման կայաններին ամրացված արտադրող խոյերը լրիվ ողտադործելու նպատակով նրանց ամրացվում են մոտակա կոլտնտեսութեանների վոչխարները:

4. Յածր դեներացիայի մետիս վոչխարներ ունեցող տնտեսութեանների արհեստական սերմնավորման կայաններում կարելի չէ և թույլատրել ողտադործման համար այն դտարյուն խոյերին, վորոնք դրանցված են պետական տոհմային դրքում:

5. Այն շրջաններում, վորտեղ անց է կացվում վոչխարների մասսայական մետիզացում, արհեստական սերմնավորման կայաններում կարելի չէ ողտադործել դտարյուն արտադրողներ, վորոնց ցուցանիշները համապատասխանում են պետական տոհմային դրքում դրանցելու պահանջներին:

6. Բոլոր դեպքերում արտադրողները դտարյունութեան ատիճանով և մթերատութեամբ պետք է բարձր լինեն բոլոր այն վոչխարներից, վորոնք ամրացվում են արհեստական սերմնավորման կայանին: Նրանք պետք է ապահովեն սերնդի մթերատութեան բարձրացումը, և եքտերիերի լավացումը: Արտա-

շրջող խոյերի ընտրութեան ժամանակ բացի բոլոր քանակից և կենդանի քաշից անհրաժեշտ է հաշիւ առնել բոլոր յերկարութեամբ, բարակութեամբ և միատարրութեամբ, մորթիներէ մորթի (կարակուներէ համար): Մեկ արտադրողին 2000-3000 մաքու բռնվածութիւն ունեցող արհեստական սերմնավորման կայաններում նշանակված նորարարող և կիսակոպտարուող խոյերի (ուարուլէ, պրեկոս, ցիգայ, և անդլիական: ցեղերի) նկատմամբ, ցանկալի յէ բոլոր լարորատոր հետազոտումը:

7. Տոհմային ֆերմաներում մաքիներն արտադրողներին պետք է ամբողջական սերեկցիոն պլաններէ և անհատական բոնիտիւրով կաշի գրանցումներին խիստ համապատասխան, իսկ մնացած տնտեսութիւններում զուգավորման և մետրիզացիայի պլաններին համապատասխան:

8. Մրցելովում է արտադրողներով սերմնավորել նրանց մոտիկ ազգական մաքիները (մորը, քրոջը, աղջկան), բացի այն դեպքերէ, վորտեղ յերկրային, մարդային, հողային որգանները նախորդ պլանավորել են: Մասսայական ազգակցական բուծում թույլ չտալու նպատակով, անհրաժեշտ է արհեստական սերմնավորման կայաններում կադմակերպել արտադրողներէ պարբերական փոփոխում, մոտավորապէս 2-3 տարին մեկ անգամ, տոհմային աշխատանքի պլանին համապատասխան: Փոփոխման կապակցութեամբ կայանում նշանակված նոր արտադրողները, պետք է վորակով ավելի բարձր լինեն նախորդներէ:

Յուրաքանչյուր արհեստական սերմնավորման կայանում ակնարկովում է յերկու և ավելի արտադրող խոյեր սերեկցիոն պլանի և անհատական բոնիտիւրով կաշի գրանցումներէ համապատասխան: Արհեստական սերմնավորման կայաններում ողտադրոծվող արտադրողներէ համար տարվում են ՈՍՀՄ Հողթողկոմատի կողմից սահմանված քարտեր (Ձ 1 ձեւը), վորի իսկականը պահվում է տնտեսութեանում, իսկ պատճեն չըջողբաժնում:

9. Արհեստական սերմնավորման կայաններում թույլատրվում է ողտադրոծել միանգամայն առողջ, անասնաբուժական-սանիտարական մշակման յենթարկված և վարակիչ հիվանդութիւններէ կասկածներէ դերծ արտադրողներ:

10. Արտադրողներ ընտրելու և արհեստական սերմնավորման կայաններին բաշխելուն զուգընթաց, ստուգվում է նրանց

տնտեսական կարողութեանը, նմանապէս սպերմայի քանակն ու վորակը, դրա համար յուրաքանչյուր խոյին նախապատրաստական չըջանում ծածկել են տարիս արհեստական վաղիւնայի վրա (հետոց) և ստացված սպերման հետազոտում են միկրոսկոպի տակ:

11. Արհեստական սերմնավորման կայաններէ համար ընտրված բոլոր արտադրողներէ սպերմայի վորակի ստուգումը նախապատրաստական չըջանի առաջին ամսին կատարվում է հնգօրյակում մեկ անգամ:

Զուգավորման և սերմնավորման սկզբին արտադրող խոյերէ սպերմայի վորակի ստուգումը պետք է կատարվի ավելի հաճախակի: Ստուգման որը արտադրող խոյին թողնում են ծածկի յերկուական անգամ մեկից մեկ ու կէս ժամ ընդմիջումներով:

12. Բարձր բռնվածութեան ունեցող կայաններում, սերմնավորման սկզբից 20 որ առաջ, արտադրող խոյերէ սպերմայի քանակի և վորակի ստուգումը պետք է կատարվի հետեւյալ ժամկետներում.

	Ստուգման որերը	Ծածկումներէ քանակը, հետազոտման որը
Սերմնավորման սկզբից 20 որ առաջ		Հնգօրյակում մեկ անգամ
» » 15 »		» »
» » 10 »		» »
» » 5 »		» »

13. Սերմնավորման սկզբին կայաններին ամբողջած բոլոր արտադրող խոյերէ սպերման պետք է ունենա ՈՒ-4-ից վոչ պակաս ղնահատական, այսինքն՝ պետք է լինի խիտ, նրա սպերմատոզոիտներէ 80 տոկոսից վոչ պակասը պետք է ունենա ուղղադիր առաջընթաց շարժում:

Սերմնավորման սկզբից ՈՒ-4-ից ցածր ղնահատականով սպեր-

մա տվող արտադրող խոյերին արհեստական սերմնավորման հայաներում ոգտադրոճել չի թուլլատրվում:

14. Բարձր բեռնվածութլուն ունեցող կայաններին ամրացված խոյերի սպերմայի դեհատումը կատարվում է նայել նրա հայունութլյան և սպերմատոզոիդների քանակի համաձայն:

15. Արտադրող խոյերը, յուրաքանչյուր սերմնավորման հայանին ամրացվում են մեկ արտադրողին 200-1000 մաքու հաշվով, մաքիների քանակին և խոյերի տոհմական հատկութլուններին համապատասխան: Լավագույն և ըստ սերնդի ստուգված արտադրողներին կարելի յե ամրացնել ավելի մաքրաքանակ, այդ դեպքում մաքիների ամրացումն արտադրողներին պետք է կատարվի տոհմային սերնդի տն աշխատանքի պլանին համապատասխան:

5. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Արտադրող խոյերին կերակրելու և պահելու հիմնական պայմաններն են.

ա) Ապահովել արտադրողներին վիտամիններով և սպիտակուցային նյութերով հարուստ կերերով, դա բարձրացնում է խոյերի սեռական ակտիվութլունը:

բ) կերաբաժնի մեջ հանքային նյութեր մտցնելը.

գ) կերաբաժնի մեջ շատ մեծածավալ կերեր չմտցնել, կերաբաժինը դարձնել բաղմաղան՝ թե կոպիտ և թե խտացրած կերերի տեսակետից.

դ) արտադրողներին ամառը գրոսանքի հանել — օրական 6-8 ժամից վոչ պակաս, ձմեռը 4-6 ժամ.

յե) որվա ընթացքում կերաբաժինների ճիշտ բաշխումը.

զ) լավ յեղանակին և որվա վոչ չող ժամանակ խոյերին մշտապես պահել բացութլյա և հնարավորութլուն տալ արոտի ընթացքում շարժվելու:

ե) ճիշտ բաշխել որվա ընթացքում կատարվելիք ծածկումները: Անհրաժեշտ է պարբերաբար անցկացնել վոչ պակաս քան

ամիսը մեկ անգամ արտադրող խոյերի անասնաբուժական դըննում:

2. Արտադրող խոյերին կերակրելիս ու խնամելիս անհրաժեշտ է հետեւել, վոր նրանք մշտապես լինեն տոհմային դիրքութլյան, այսինքն լինեն վոչ շատ դեր և վոչ ել նիհար ու սերմնավորման ժամանակաշրջանում — չկորցնեն իրենց դիրքութլունը վորի համար անհրաժեշտ է 10 որը մեկ անգամ նրանց կշուել:

3. Արտադրող խոյերի համար ամենալավ կերերն են՝

ա) ձմեռը լավորակ մարդագետնային խոտ (ցանկալի յե սովույտի) և խտացրած կերեր (վարսակ կամ վարսակի, թեփի, կորեկի և քուսպի խառնուրդ), այլև արմատադուղներ, ավելի լավ է դադար կամ լավ սիլոս:

բ) ամառը՝ արոտ, կանաչ խոտ մսուրում և՝ խտացրած կերեր (վարսակ կամ վարսակի, թեփի, կորեկի և քուսպի խառնուրդ):

4. Արհեստական սերմնավորման հայանի համար առանձնացված արտադրող խոյերին պետք է կերակրել անհատական ձեւով ամբողջ տարվա ընթացքում: Խոյերին ուժեղ կերպով պետք է սկսել նախապատրաստել վոչ ուշ քան սերմնավորման սկսվելուց մեկուկես յերկու ամիս առաջ:

Նախապատրաստման շրջանում խոյերի կերաբաժնի մեջ պետք է մտցնել խտացրած կերեր, աստիճանաբար ավելացնելով նրանց քանակը մինչեւ սերմնավորման սկիզբը:

5. Մաքսիմալ բեռնվածութլուն ունեցող կայանների համար նշանակված արտադրող խոյերին ուժեղ կերերով պետք է կերակրել ամբողջ տարվա ընթացքում: Մինչեւ ուժեղ նախապատրաստելու շրջանը, նրանց որական կերաբաժնի մեջ պետք է մտցնել լավ վորակի խոտ կամ կանաչ (արոտ) ուղածի հալի և կես կերոգրամ խտացրած կեր ամեն մի գլխին:

6. Տոհմային արտադրող խոյերի համար սերմնավորման շրջանում առաջադրվում է հետեւյալ որինակելի կերաբաժինները, վորոյիսին մշակված է վոչխարաբուժութլյան և այծաբուժութլյան Համամիութենական դիտահետադոտական ինստիտուտի կողմից:

7. Տոհմային արտադրող խոյերի կերակրման նորմաները արհեստական սերմնավորման շրջանում.

Արտադրող խոյրերի կեն- դանի քաղը կ. գ.	1 անգամ ծածկելիս		2 անգամ ծածկելիս		3 անգամ ծածկելիս	
	Մարսվող սպիտակ- կուց գը- րամներով	Կերի միավոր կ. գր.	Մարսվող սպիտակ- կուց գը- րամներով	Կերի միավոր կ. գր.	Մարսվող սպիտակ- կուց գը- րամներով	Կերի միավոր կ. գր.
70,0	95—105	1,30—1,40	120—135	1,40—1,60	145—160	1,50—1,60
80,0	104—115	1,42—1,53	131—143	1,53—1,75	159—175	1,64—1,75
90,0	112—124	1,54—1,66	142—160	1,66—1,89	171—189	1,77—1,89
100,0	121—133	1,65—1,78	152—171	1,78—2,03	184—203	1,90—2,03
110,0	128—142	1,76—1,89	162—182	1,89—2,16	196—216	2,03—2,16

Արտադրող խոյրերի կեն- դանի քաղը կ. գ.	4 անգամ ծածկելիս		5 անգամ ծածկելիս		6 անգամ ծածկելիս	
	Մարսվող սպիտակ- կուց գը- րամներով	Կերի միավոր կ. գր.	Մարսվող սպիտակ- կուց գը- րամներով	Կերի միավոր կ. գր.	Մարսվող սպիտակ- կուց գը- րամներով	Կերի միավոր կ. գր.
70,0	180—200	1,60—1,70	220—246	1,65—1,76	246—276	1,76—1,87
80,0	197—219	1,75—1,86	241—269	1,80—1,92	280—302	1,92—2,04
90,0	213—236	1,89—2,01	260—291	1,95—2,08	303—326	2,08—2,21
100,0	228—254	2,03—2,16	279—312	2,00—2,23	325—350	2,23—2,37
110,0	243—270	2,16—2,30	297—333	2,23—2,38	346—376	2,38—2,53

Արտադրող խո- յրերի կենդանի քաղը կ. գր.	7 անգամ ծածկելիս	
	Մարսվող սպիտակուց գրամներով	Կերի միավորը կ. գր.
70,0	280—300	2,00—2,20
80,0	306—328	2,18—2,41
90,0	331—355	2,33—2,60
100,0	355—381	2,54—2,79
110,0	378—405	2,70—2,97

Արտադրող խոյրերի համար առաջադրվում է հետևյալ որ-
նակելի կերարածիները (հաշվված ցույց տրված նորմաների
հիման վրա) .

Կերերի քանակը կ. գր.	Կերերի քանակը կ. գր.		
	3 անգամ ծածկե- լիս	5 անգամ ծածկե- լիս	7 անգամ ծածկե- լիս
Ա. 70 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող արսադրող խոյրերի համար.			
Տափաստանային խոտ (հացադգի-այլ աղբի) . . .	1,2	1,0	0,8
Կամ առվույտի խոտ	1,0	0,8	0,7
Ստադրած կերերի } Կարեկ ջարդած գրուխյամբ . . .	0,5	0,6	0,6
խառնուրդ } Երեւածաղկի քուսպ . . .	0,2	0,2	0,3
	0,2	0,3	0,4
	0,1	0,1	0,1
Հավի ձու (հատ)	—	2—3	4—5
Քաշած կաթ լիտրերով	0,5	1,0	1,5
Արմատապտուղներ (զաղար)	0,2	0,4	0,5
Վոսկրայուր	0,01	0,01	0,01
Քարաղ (լիզելու համար)	ուղածի չափ		
Բ. 90. կ. գրամ կենդանի քաշ ունեցող արսադրող խո- յրերի համար.			
Տափաստանային խոտ (հացադգի, այլ աղբի) . . .	1,5	1,2	1,0
Կամ առվույտի խոտ	1,0	1,0	0,8
Ստադրած կերերի } Կարեկ ջարդած գրուխյամբ . . .	0,6	0,6	0,7
խառնուրդ } Երեւածաղկի քուսպ . . .	0,3	0,3	0,4
	0,2	0,4	0,4
	0,1	0,1	0,1
Հավի ձու (հատ)	—	3	5
Քաշած կաթ լիտրերով	0,5	1,0	1,5
Արմատապտուղներ (զաղար)	0,2	0,4	0,5
Վոսկրայուր	0,01	0,01	0,01
Քարաղ (լիզելու համար)	ուղածի չափ		
Գ. 110 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող խոյրերի համար			
Տափաստանային խոտ (հացադգի-այլ աղբի) . . .	1,8	1,5	1,2
Կամ առվույտի խոտ	1,5	1,2	1,0
Ստադրած կերերի } Կարեկ ջարդած գր.	0,7	0,7	0,8
խառնուրդ } Երեւածաղկի քուսպ . . .	0,4	0,4	0,4
	0,2	0,4	0,4
	0,1	0,1	0,2
Հավի ձու (հատ)	—	3	5
Քաշած կաթ լիտրերով	0,5	1,5	2,0
Արմատապտուղներ (զաղար)	0,2	0,4	0,5
Վոսկրայուր	0,01	0,01	0,01
Քարաղ (լիզելու համար)	ուղածի չափ		

6. ՀՈՏԻ ՆԱԽԱՐԱՍՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ձուն քիչ աղ արած լցվում է բերանը յերկու յերեք անգամ:

8. Որական կերարածիներն մեջ մտնող կոպիտ կերերը պետք է բաժանել յերկու նվազի, իսկ խտացրած և հյութալի կերերը յերեք նվազի:

9. Ձմեռը խոյերին պետք է ջրել որական յերկու անգամ, իսկ ամառը 3-4 անգամ:

Ոմեկու ջուրը պետք է լինի լավ վարակի, թարմ և վոչ սառը (8 աստիճանի), ջուրը պետք է խմեցնել առանձին դուլից կամ հատուկ խմոցից:

10. Այն չենքը, վորտեղ պահվում են արտադրող խոյերը: պետք է լինի անպայման մաքուր, չոր և լուսավոր. խոնավ, մութ և կեղտոտ չենքում արգելվում է արտադրող խոյեր պահել:

11. խոյերի կահակները յերկարելու դեպքում պետք է կտրել տարեկան 2-3 անգամ:

12. Արտադրող խոյին առաջին անգամ պետք է թողնել ծածկի առավոտյան, կերակրելուց և դրոփանքից յերկու ժամ հետո, այնուհետև ծածկումները պետք է կատարել նախորդ ծածկելուց 1—1,5 ժամ հետո: 4 անգամ ծածկելուց հետո պետք է խոյին ավելի յերկարատեվ՝ 2-3 ժամով ընդմիջում տալ:

13. Յեթե կայանն աշխատում է մաքսիմալ բեռնվածությամբ և արտադրող խոյից պահանջվում է ստանալ մեծ քանակությամբ սպերմա, այդ դեպքում 5-րդ ծածկումը արվում է ցերեկվա ընդմիջման կերակրելու և դրոփանքից յերկու ժամ հետո, իսկ 6-րդ և 7-րդ ծածկումները նախորդից մեկ ժամ հետո:

14. Նոմալ զարգացած և առողջ մեծահասակ խոյը մեկ անգամ ծածկելիս տալիս է 1,5 խորանարդ սանտիմետր խիտ սպերմա, 4-ից վոչ ցածր ակտիվությամբ, իսկ յեթե արտադրող խոյը 1 խորանարդ սանտիմետրից պակաս սպերմա չէ տալիս ու այն ել միջակ խտությամբ կամ նոսր և թույլ ակտիվությամբ, այդ դեպքում հաճախ այդ ցույց է տալիս, վոր խոյը ճեշտ չի կերակրվում և անհրաժեշտ չափով զբոսանք չի ուտացել, այդպիսի դեպքերում անհրաժեշտ է անմիջապես լավացնել կերակրումը և խնամելու պայմանները, միաժամանակ հանելով հաճախակի դրոփանքի:

1. Սերմնավորման աշխատանքների սկզբից վոչ պակաս քան մեկ և կես ամիս առաջ պետք է ավարտել հակադրոսային լողացումները և մյուս պրոֆիլակտիկ միջոցառումները:

Ձուլավորման համար կաղմված հոտերին հատկացվում են լավաբույն տրոտները, վորտեղ մաքրիներն խամ են արածում մեկ ամսից վոչ պակաս:

2. Նախապատրաստական և զուլավորման շրջանում մաքրիները պետք է կերակրվեն առատ և լավորակ կերերով, այդ կնպատի մաքրիների բարձր տոկոսով բեղմնավորմանը և ավելի շատ յերկվորյակներ ծնելուն:

3. Այն շրջաններում, վորտեղ մաքրիների զուլավորումը կատարվում է արոտային պայմաններում սերմնավորման կայանների տեղերի դասավորումը պետք է ճիշտ նշվի և այդ կայանների շրջակայքում արոտներն անձեռնմխելի պետք է մնան մինչև սերմնավորման սկիզբը: Արգելվում է փարախների շուրջն ընկած արոտներում արածացնելը, դրանք պետք է պահպանվեն մինչև սերմնավորման կամպանիան սկսվելը: Անկախ առկա յեղած արոտներից, անհրաժեշտ է արհեստական սերմնավորման կայաններում (հոտերում) ունենալ խտացրած կերերի համապատասխան պաշար՝ արտադրողների համար:

4. Այն շրջաններում, վորտեղ զուլավորման ժամանակաշրջանն ընկնում է վոչխարների մսուրային շրջանում, պետք է զուլավորման ժամանակամիջոցում անհրաժեշտ բոլոր կերերը մինչև վոլավորման սկսելը փոխադրել հոտերի դստված վայրը: Բոլոր կայանները պետք է ապահովված լինեն բավարար չափով ջրելատեղով և լավ մաքուր խմելու ջրով:

7. ՄԱՔԻՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ՅԵՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Փորձախոյերն ընտրվում են աշխուժ, կոպտաբուրդ կամ մետիս խոյերից և ամրացվում են հոտերին 1000 մաքուն 10-12 խոյի հաշվով:

2. Մաքրիների սեռական ցանկությունը պետք է ստուգել ամեն օր, փորձարկման համար մաքրիների հոտը բաժանվում է

ժամանակ ... (զանազան տեղեր) ...

խմբերի 150-200 ական գլուխ, այդ խմբերը քչում են փարախնե-
րը կամ բազաները, վորտեղ թողնում են փորձախոյերը՝ նախո-
րոք նրանց փորի տակից գոգնոց կապելով: Յանկուլթյուն ու-
նեցող և համարվում այն մաքին, վորը չի փախչում, յերբ
փորձախոյն ուղում և նրան ծածկել: Պետք և հետեվել, վոր-
պեսզի մաքին իր առաջ աղատ տարածություն ունենա և բակի
կամ փարախի անկյունում չսեղմվի, վորովհետև այդ դեպքում
կարելի չէ սխալվել ցանկությունը վորոշելիս: Այդ կարգով
ցանկությունը հայտնաբերված վորջիւղներին առանձնացնում են
և փորձարկումը վերջացնելուց հետո քչում սերմնավորման կա-
յանը:

Յանկություն ունեցող մաքիներին ջղեկուց հետո անհրա-
ժեշտ և փորձախոյերի վրայից հանել գոգնոցները և դրանք
մաքուր պահել, ամեն ոք լվանալով: Փորձի ժամանակ անհրա-
ժեշտ և հետեվ, վորպեսզի փորձախոյի վրայից գոգնոցները
չընկնեն, ցանկություն ունեցող մաքիներին առանձնացնում են
հովվային բրիգադները:

8. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

1. Կայանների ճիշտ աշխատանքի ցուցանիշներն են.

ա) արհեստական սերմնավորման սլանի կատարումը.

բ) բեղմնավորված մաքիների առավելագույն տոկոսը.

գ) ցանկություն ունեցող մաքիների հայտնաբերման դործի
ճիշտ կազմակերպումը և նրանց լրիվ հայտնաբերումը.

դ) մաքիների, արտադրողների և փորձախոյերի կանոնավոր
պահպանումը.

յե) արտադրողներին ընտրությունով, տոհմային սելեկցիոն
աշխատանքի սլանին համապատասխան և նրանց ճիշտ ոգտա-
դործումը.

զ) զուգավորման սկզբից վոչ սլակա քան մեկ ամիս առաջ
հողբաժինն ստուգում և արհեստական սերմնավորման պատրաս-
տականությունը, (սերմնակայանների ապահովվածությունն
անհրաժեշտ դործիքներով ու նյութերով, աշխատակիցներով,
արտադրողներով և այլն):

2. Մի հրահանգչի սպասարկելիք կայաններին քանակը սահ-

մանվում է շրջանի տերիտորիայի և կայանների ցանցի տեղա-
վորման խտությունից:

3. Վորպես հրահանգչի պետք է ոգտադործել շրջհողբաժնի
ալագ զոտտեխնիկին, տոհմային գծով զոտտեխնիկին, յենթաշր-
ջանային զոտտեխնիկին, վորոնք ունեն հատուկ պատրաստակա-
նություն:

4. Հրահանգչի պարտականությունները՝

ա) սլանը կազմելու և կատարելու պատասխանատվությու-
նը.

բ) կոլտնտեսականների մեջ բացատրական աշխատանք տա-
նելը՝ արհեստական սերմնավորման նշանակության մասին.

գ) սերմնավորման կայանների տեխնիկների և մյուս աշխա-
տակիցների ընտրությունն ու պատրաստումը.

դ) արտադրողների սպերմայի ստուգման դործի կազմակեր-
պումը.

յե) նյութերի խնայողարար ծախսման հսկողությունը.

զ) կայաններին մշտական հրահանգավորումը.

ե) հսկել, վոր արտադրողները և փորձախոյերը նորմալ
վիճակում լինեն.

ը) պատասխանատու չէ կայանի դործունեյության շրջանում
դտնվող բոլոր մաքիներին տոհմային խոյերով զուգավորելու
դործին.

թ) պատասխանատու չէ ամբողջ աշխատանքի ճիշտ կատար-
ման և նրա արդյունքների համար.

5. Կոլտնտեսություններում արհեստական սերմնավորման
դործի կազմակերպման աշխատանքներին մեջ պետք է ներգրավ-
վեն նայել վոչխարաբուծական Փերմաների վարիչները (բրի-
գադիքները):

ՎԱՅ-ի վարիչի (բրիգադի) պարտականություններն են՝

և) մայրական կալմի, արտադրողների և փորձախոյերի ժա-
մանակին նախապատրաստումը.

բ) ցանկություն ունեցող մաքիներին հայտնաբերելու դոր-
ծի ղեկավարությունը:

գ) փորձախոյերը կանոնավոր պահելու դործի պատասխա-
նատվությունը.

դ) կայանները բանվորական ուժով, տնտեսական կահավոր-
ւումով, նյութերով և կերերով ապահովելը.

6. Կայանի վարիչի պաշտոնը տանում է տեխնիկ սերմնա-
փորոզը, վորին նշանակում է կոլտնտեսությունից վարչությունը:

Տեխնիկ սերմնավորողի պարտականություններն են՝.

ա) արհեստական սերմնավորման կայանի աշխատանքներին
պլան կազմելը և կատարումը, սերմնավորման կայանի շենքի
նախապատրաստումը և կահավորումը.

բ) արտադրող խոյերի նախապատրաստումը և սպերմալի
վորակի ստուգումը.

դ) ցանկություն ունեցող մաքիների առանձնացման, ար-
տադրող խոյերի և վործախոյերի կերակրման ու պահպանման
հսկողությունը:

զ) սպերմալի ստացումը և սրսկումը.

յե) հիվանդ անասունների առանձնացումը.

դ) սերմնավորման կայանի աշխատանքների մասին հրա-
հանդիշն տեղեկություններ ներկայացնելը.

ե) հաշվառումը և կայանի գործիքների ու կահավորման
պահպանումը.

ը) կոլտնտեսություններում կոլտնտեսականների մեջ բա-
ցատրական աշխատանք տանելը՝ արհեստական սերմնավորման
նշանակություն մասին.

թ) արհեստական սերմնավորման արդյունքների հաշվա-
ռումը: Տեխնիկ սերմնավորողն իր աշխատանքների ընթացքում
խիստ կերպով դեկավարվում է արհեստական սերմնավորման վե-
րաբերյալ տեխնիկական հրահանգով և հրահանգչի ցուցմունք-
ներով:

7. Կոլտնտեսությունից վարչությունը արտադրողներին կերա-
կրման և խնամքի համար նշանակում է կոլտնտեսությունից ավե-
լի փորձված աշխատողներին պատասխանատու անձնավորու-
թյուն՝ տեխնիկ սերմնավորողի ոգնականի իրավունքներով:

8. Մաքիմալ բեռնվածություն ունեցող կայաններին լարո-
րանտների պարտականություններն են՝. սպերմալի վորակի աչ-
քաչափով կոնտրոլ զնահատումը, սպերմալի կայունությունը
(ռեզիստենցիա) վորոշելը, սերմնարջիջների քանակը հաշվելը
և յուրաքանչյուր եյակուլյատով սերմնավորված մաքիների քա-
նակը հաշվի առնելը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եյակուլյատ կոչվում է արտադրողի մեկ ծածկու-
մից ստացված ամբողջ սպերմալի քանակը:

9. Հավաքարուհիները (վացարարուհիները) շենքը մա-
քուր են պահում, լվանում են ամանները, վառում են պրիմու-
սը՝ գործիքները բոցակիղելու համար, ջուր են տաքացնում,
աշխատանքի ժամանակ լվանում են հեշտոցային հայելիները,
վառում են կայանի վառարաններն ու լամպերը, հետեվում են
օարքավորման մաքրությունը, լվանում են խալաթները, սըր-
բիշները և այլն:

10. Անհրաժեշտություն դեպքում կայանի համար ուսանող
աշխատողներ նշանակվում են հետեվյալ աշխատանքները կա-
տարելու՝ մաքիներին սերմնավորելու համար դադարահի մոտ բե-
րելը, տեխնիկ սերմնավորողի հետ միասին ցանկություն ունե-
ցող մաքիներին ստուգելու և տեխնիկ սերմնավորողի առաջա-
դրանքներով տրիշ աշխատանքներ կատարելու համար:

9. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՇԵՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵԼԸ

1. Բոլոր գործիքները և նյութերը պետք է պահել մաքուր
պահարանում, ընդվորում չի թույլատրվում այդ պահարաննե-
րում վորեն դեղորայք պահել:

2. Աշխատանքը վերջանալուց հետո գործիքները (արհես-
տական հեշտոցը) և ամանները պետք է լվանալ սոդայի յերկու
տոկոսանի դուլ լուծույթով (մեկ լիտր ջրին ավելացվում է 20
գրամ սոդա) ապա վորոզում են մաքուր ջրով և չորացնում:

Արդելվում է արհեստական սերմնավորման ամաններն ու
կահավորումն ուրիշ նպատակներ համար ոգտագործելը:

3. Արհեստական սերմնավորման սեզոնը վերջանալուց հե-
տո, բոլոր գործիքներն ու ամանները պետք է հավաքել, բոլոր
միտաղյա իրերին վաղելին քսել, վաթաթել թղթի մեջ և պահել
չոր տեղ:

4. Շարիքները և սերմնդունիչները լվանալու համար գոր-
ծադրում են նատրիում քլորիդի մեկ տոկոսային լուծույթ:
Պրա համար կայաններն ուղարկվում է քիմիապես մաքուր
նատրիում քլորիդի աղ: Հարկ յեղածի չափով արհեստական
սերմնավորման կայաններում կշռում են անհրաժեշտ քանակու-
թյամբ աղ, և պատրաստում լուծույթ, վերցնելով մեկ լիտր
ջրին 10 գրամ նատրիում քլորիդ:

Կայանում կշեռք չլինելու դեպքում արհեստական սերմնավորման հրահանգիչը շրջանային կենտրոնում կշռում, պատրաստում և նատրիում քլորիդի առանձին բաժիններ և ուղարկում կայաններին հղկված խցանով բանկաների մեջ: Քլորական նատրիումի լուծույթը պատրաստվում և ամեն օր:

5. Շարիքները և սերմնդուռնիչները լվանալու համար կարելի չէ յե նատրիում քլորիդի լուծույթ պատրաստել սովորական խմելու, նախորդ յեռացրած, քամած լավ ջրով:

Աշխատանքն սկսելուց առաջ պետք է կայանում յեղած ջուրը փորձել՝ պարզելու համար, թե նա վորքան պիտանի չէ նատրիում քլորիդի լուծույթ պատրաստելու համար. դրա համար պատրաստում են լուծույթ տեղական ջրով և թորած ջրով ու պահում առանձին:

Լուծույթների բիոկոնտրոլի համար մի եակուլյատից հավասար մասերով վերցնում են թափմա և չորս անգամ նոսրացնում յուրաքանչյուր լուծույթով առանձին: Որվա ընթացքում յերկու ժամը մեկ անգամ միկրոսկոպի տակ ստուգում են սպերմատոզոիդները ակտիվությունը: Յեթե տեղական ջրով պատրաստած լուծույթով նոսրացրած սպերմայի վորակը խիստ ընկնում և, այդ դեպքում նատրիում քլորիդի լուծույթ պատրաստելու համար պետք է դործ ածել թորած ջուր:

ԾԱՆՈԹՈՒԹ.—Նատրիում քլորիդի լուծույթ պատրաստելու յեղանակը.

1. Ջուրը յեռացնել.
2. Պաղեցնել.
3. Ֆիլտրել.
4. Չափել անհրաժեշտ քանակությամբ ջուրը (մեկ լիտր լցնել հղկված խցանով բանկայի մեջ).
5. Բանկայի մեջ լցնել պատրաստի կշռած (10 գրամ) նատրիում քլորիդ ու լուծել:

6. Ջուրը քայքայում և սպերմատոզոիդներին, դրա համար էլ աշխատանքի ժամանակ դործածվող ամանները պետք է լինեն բոլորովին չոր կամ լվացված նատրիում քլորիդի մեկ տոկոսային լուծույթով:

7. Սպերմատոզոիդները քանակը հաշվելիս խառնիչի մեջ լցնելու համար նատրիում քլորիդի յերեք տոկոսային լուծույթ պատրաստելիս յուրաքանչյուր 1000 խորանարդ սանտիմետր ջրին ավելացնում են 30 գրամ նատրիում քլորիդ: Չի կարելի չափիցը լվանալ նատրիում քլորիդի 3 տոկոսանի լուծույթով:

8. Սպիրտային խծուծներ (տամպոն) պատրաստելու համար վերցնում են հիդրոսկոպիկ բամբակ, բաժանում են այն 3-4 սանտիմետր արամագծով տափակ, կլոր մասերի, 96 աստիճան սպիրտի (ռեկտիֆիկատ) մեջ, քամում են ու դնում բանկայի մեջ: Խծուծները պատրաստում են նախապես և պահում հղկված խցանով հատուկ բանկաների մեջ:

9. Նատրիում քլորիդի մեկ տոկոսանի լուծույթ, սպիրտային խծուծ և այլն պատրաստում և տեխնիկ սերմնավորողը:

10. Արհեստական սերմնավորման պրակտիկայում թուլաբերվող միակ ախտահանիչ նյութը զինու սպիրտն է, այն էլ բոլորովին մաքուր (րեկտիֆիկատ): Դեռատուրատ սպիրտն արհեստական սերմնավորման աշխատանքների ժամանակ կարելի չէ դործածել միայն վորպես վառելանյութ:

11. Վաղելիներ և վաղելիների յուղը ստերիլիզացիայի յեն յեն-թարկում յեռացող ջրի մեջ 20-30 բուլե տեղդությամբ. դրա համար վաղելիներ լցնում են հղկված խցանով բանկայի մեջ և դնում ջրով լցված կաթսայի մեջ, վորը տաքացնում են սլրխուսի վրա:

Նախքան ջրով կաթսայի մեջ դնելը բանկայի վրա պետք է հազցնել մի կտոր ռետինե խողովակից չինած լայն դտի՝ անցկացնելով այն բանկայի խցանի և հատակի վրայով կամ բանկայի տակ դնել մի կտոր բամբակ:

12. Լայն վզով սպակյա ամանը մշակվում և բոցակիզելով: Ապակյա ամանները լվանում են առանց ոճառի, վորովհետեւ նրա հետքերը սպանում են սպերմատոզոիդներին: Թուլատրվում և դործածել սողայի յերկու տոկոսային լուծույթ:

13. Սերմնդուռնիչները մշակվում են յերկու յեղանակով, սպիրտի մեջ լվանալով կամ բոցակիզելով:

ա) սպիրտով մշակելիս սերմնդուռնիչները մաքուր լվացվում են ջրով, վորողվում են 65 աստիճանի սպիրտով, ապա մի քանի անգամ (4-5) նատրիում քլորիդի մեկ տոկոսային լուծույթով, վորպեսզի լվացվի և հեռացվի սպիրտի հետքերը:

բ) յեթե մշակումը կատարվում և բոցակիզելով, այդ դեպքում մաքուր լվացված սերմնդուռնիչը լավ չորացվում և ախտազերծվում և կրակի չմոռ բոցով:

Լայն սերմնդուռնիչներն ավելի լավ և ախտազերծել բոցակիզելով, իսկ նեղ տեսակները սպիրտով լվանալ:

14. Բողակիզելու համար կարելի չէ ոգտագործել սպիրտի լիծուծի կրակը: Թույլատրվում է բողակիզելու համար ոգտագործել սպիրտայրոցի, յեթե նա մեծ բոց է տալիս: Բողակիզման յենթակա իրերը պետք է այրել և վոչ թե չիկացնել:

15. 65 աստիճանի սպիրտ պատրաստելու համար 677 խոր սանտիմետր 96 աստիճանի սպիրտին ավելացնել 323 խոր սանտիմետր ջուր: Սպիրտի ուժը ստուգվում է սպիրտաչափի միջոցով: 65 աստիճանի սպիրտը դործ են ածում չարիցիները և սերմընդունիչները լվանալու համար:

10. ՍՊԵՐՄԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

ա) ՄԱՐԻՆԵՐ ՍՊԵՐՄԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Սպերմա ստանալու համար չի կարելի ծածկման տակ գնել վորեվէ հիվանդության նշան ունեցող մաքիներ: Առանձնապես պետք է հետեւել սեռական որդանների հիվանդություններին՝ արտաքին սեռական որդանների ուռչելը, հեչտոցի լորձաթաղանթի վրա բշտիկներ, յերեմվալը, հեչտոցից թարախանման նյութ հոսելը:

2. Իրեւի կանոն, սպերմա ստանալու համար առանձնացվում են մաքիներ սերմնավորման համար բերված մաքիներից և սպերմա ստանալուց հետո նրանց սերմնավորում են սովորական կարգով:

Արհեստական հեչտոցի մեջ սպերմա ստանալու համար կարելի չէ ոգտագործել ամորձատած խոյեր կամ խրտվիլակներ:

բ) ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՀԵՇՏՈՅԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Արհեստական հեչտոցը խնամքով լվանում են նախ դուրսդայի լուծույթով (100 խոր սանտիմետր ջրին 2 գրամ յերկած լասթիվային սոդա), ապա՝ դուր մաքուր ջրով և չորացնում:

Հեչտոցը ջրով լցնելու համար անհրաժեշտ է բացել յերկու ծորակները, ուտինե բալոնը (վորը մացված է ծորակի վրա հագցրած միացնող ուտինե խողովակի մեջ), ձեռքով վորջան հնարավոր է ուժեղ կերպով սեղմում են բալոնը, իսկ յերկրորդ ծորակը մացնում են ըստ ցելսիուսի 50-55 աստիճան ջերմության ջուր պարունակող անոթի մեջ: Սեղմած բալոնն աղտոտելով, ջուրը ծծվում է հեչտոցի ներսը: Յեթե ներս չի ծծվել

բալաւար քանակի ջուր, պետք է վերի ծորակը փակել, բալոնը հանել, սեղմել այն, նորից միացնել հեչտոցին և կրկնել ջրի ներծծումը: Ջուր լցնելուց հետո ծորակները փակվում են: Արհեստական հեչտոցը ջրով լցնելիս գլանը պետք է լցված լինի ջրով յերկու յերրորդական ծավալի չափով (150—180 խ. սանտիմետր ջուր): Ջուրը պետք է տաքացնել շրջապատի ոդի ջերմաստիճանի համաձայն, այն հաշվով, վոր պատրաստված հեչտոցի ներսում լինի 40-42 աստիճան ջերմություն ըստ ցելսիուսի:

2. Արհեստական հեչտոցի ներսի խողովակին պետք է քսել սեկտիֆիկատ սպիրտ՝ նախապես պատրաստված բամբակի տամպոնի և պինցետի միջոցով: Սպիրտի ավելցուկ չսկսեք և լինի ինդուվալը պետք է արագ չորանա:

3. Արհեստական հեչտոցի ծայրը 2-3 սանտիմետր խորությամբ ներս է մացվում ապակյա սերմընդունիչը, վորը նախապես մշակված է ու վողոված նատրիում քլորիդի մեկ տոկոսային լուծույթով:

4. Չորացած ներսի խողովակն ամբողջ յերկարությամբ ծայրը հալեցրած ապակյա ձողիկի միջոցով մաքուր վազելին է քովում: Վազելինով մոտ է չքսված արհեստական հեչտոցի 2-3 սանտիմետր փոքրիկ տարածություն, վորն անմիջապես ընկած է սերմընդունիչի մոտ:

Ջի կարելի դործածել վորեւե դեղ պարունակող վազելին մասնավորապես բորավազելին: Անպետք են նայել գլիցերինը և կերակրի ճարպերը: Աչխատանքի յուրաքանչյուր յերկու յերեք ուրը մեկ անգամ վազելինն անպայման ստերիլիզացիայի յեն յենթարկում:

5. Դրանից հետո բալոնի միջոցով գլանի մեջ է ներճնչվում այնքան ոդ, վոր ներսի խողովակի պատերն ամբողջ յերկարությամբ մոտիկանան իրար: Ծորակը փակում են, բալոնը հանում և սպերման ստանալու համար պատրաստի արհեստական հեչտոցը պետք է անմիջապես ոգտագործվի:

Ծածկելուց առաջ արհեստական հեչտոցի մեջ մեկ յերկուրուպեյով դնում են նախապես սպիրտի տամպոնով ախտահանված քիմիական ջերմաչափ՝ ջերմաստիճանը չափելու համար: Արհեստական հեչտոցում պետք է լինի 40-42 աստիճան ջերմություն ըստ ցելսիուսի:

1. Խոյը մաքու վրա ցատկելու մոմենտին արհեստական հեշտոցը մոտեցվում է նրա սեռական անդամի ծայրին: Հեշտոցը պետք է պահել կողքից մաքու կոնքի բարձրութեան վրա 35-40 աստիճան թեքութեամբ ափսոս, վոր սերմընդունիչը ուղված լինի թեք դեպի վերեւ: Ձախ ձեռքով զդուշութեամբ թլիւրից բռնելով՝ սեռական անդամը ուղղում են դեպի արհեստական հեշտոցի ներսը: Խոյի հրումից և սպերմայի արտադրումից հետո ծորակը բաց են անում, ողը դուրս թողնում, սերմընդունիչը հանվում է և կախարիչով ծածկվում:

2. Ձի կարելի արհեստական հեշտոցը թողնել վազելին քամ՝ վիճակում, վորովհետեւ վազելինը ռետինին լուծում է: Ծածկումից հետո արհեստական հեշտոցն անհրաժեշտ է անմիջապես սողայի լուծույթով լվանալ, հետո՝ մաքուր ջրով և չորացնել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Սողայի լուծույթն անհրաժեշտ է վազելինն ալելի լավանալու և հեռացնելու համար:

11. ՍՊԵՐՄԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Սպերման գնահատվում է ըստ ծավալի, զույնի, հոտի, ակտիվության և սպերմատոզոիդների խտութեան:

Ծավալը վորոշում են սերմընդունիչի վրա նշանակված չափազանքով:

2. Ձի թուլատրվում ողտադործել այն սպերման, վորն ունի նեխած հոտ կամ վարդադույն կարմիր, զորչ կամ կանաչավուն գույն (թարախոտ և արյունոտ սպերմա):

3. Սպերմայի ակտիվութեանն ու խտութեանն անպայման պետք է հետադործել միկրոսկոպի տակ աչքաչափով: Կատեգորիկ կերպով արգելվում է առանց միկրոսկոպի աշխատելը:

